Աշխեն Անուշավանի Հովսեփյանի **«Հնդկաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները Հարավային Կովկասում 1991-2018թթ»** Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Հնդկաստանը տևական ժամանակ հանդիսանում էր ոչ միայն Հարավարևելյան Ասիայի առանցքային երկրներից մեկը լինելով նաև «Չմիավորված երկրների շարժման» կազմակերպության առանցքային դերակատար, այլև ավանդաբար հաճախ համակարգում և գլխավորում էր տարածաշրջանի հակակայսերապաշտական շարժումները, ուրույն տեղ զբաղեցնելով «երկբևեռ» միջազգային հարաբերությունների «աստիճանակարգում»:

«Սառը պատերազմի» ավարտից, իսկ հետո նաև ԽՍՀՄ փլուզումից հետո, Հնդկաստանը ոչ միայն կորցրեց իր ռազմավարական ամենակարևոր գործընկերներից մեկին հանձինս պաշտոնական Մոսկվայի, այլև միջազգային հարաբերություններում հայտնվեց ամբողջությամբ նոր աշխարհաքաղաքական իրողություններում փորձելով նոր շեշտադրումներ ներառել իր արտաքին քաղաքական օրակարգում: Հարկավոր էր վերանայել արտաքին քաղաքականության առաջնահերթությունները և դիվերսիֆիկացնել արտաքին գործընկերների ցանկը նորովի դիրքավորվելով հարափոփոխ աշխարհակարգում:

«Սառը պատերազմի» ավարտից հետո Հնդկաստանի արտաքին քաղաքականությունը, ընդունված է բաժանել երկու հիմնական փուլի 1991-1998 թթ., երբ պաշտոնական Նյու Դելին արտաքին փոխգործակցության նոր ուղիներ էր փնտրում, և 1998 թ. ի վեր, երբ Պոքրանում միջուկային փորձարկումներից հետո, Հնդկաստանը միջազգային հարթակներում ավելի բացահայտ դիրքավորվեց որպես միջուկային տերություն արտաքին քաղաքականության շրջանակներում շեշտադրումներ կատարելով ռազմավարական ինքնուրույնության և տարածաշրջանային հավասարակշռության սկզբունքների վրա: Հնդկաստանի արտաքին քաղաքականության գործող մեխանիզմներում ավելի տեսանելի դարձան անվտանգային հաշվարկների և տնտեսական նպատակների փոխկապակցվածությունը:

Հնդկաստանի արտաքին քաղաքականությունը ներկայումս էլ շարունակում է խարսխվել բազմավեկտորության սկզբունքի վրա, որտեղ պաշտոնական Նյու Դելին փորձում է հավասարակշռել հարաբերություններն արտաքին դերակատարների հետ, մասնավորապես զարգացնելով ռազմավարական փոխգործակցությունը ԱՄՆ-ի, տնտեսական համագործակցություն ԵՄ-ի, ռազմա-տեխնիկական համագործակցությունը ՌԴ-ի հետ: Հնդկաստանի հարաբերությունները Թուրքիայի հետ շարունակում են մնալ զգուշավոր, որոշ դեպքերում նաև լարված: Ինչ վերաբերում է Իրանի հետ հարաբերություններին, ապա Հնդկաստանի համար դրանք առաջին հերթին լոգիստիկ և էներգետիկ դիվերսիֆիկացումն ապահովող հենասյուներ են:

2018 թ. ի վեր Հնդկաստանի արտաքին քաղաքականության հարավկովկասյան ուղղությունը, մասնավորապես հարաբերություններն Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հետ, դարձել է անչափ կարևոր: Միևնույն ժամանակ, արդարացի լինելու համար հարկ է նշել, որ պաշտոնական Նյու Դելիի համար Հարավային Կովկասը տևական ժամանակ չէր ընկալվում, որպես արտաքին քաղաքական առջնահերթություն ունեցող առանձին միավոր:

Այս տեսանկյունից իրավիճակը հետզհետ փոխվեց, երբ Հարավային Կովկասը սկսեց մաս կազմել տարածաշրջանային լոգիստիկ նախագծերին. «Հյուսիս-Հարավ» միջազգային փոխադրամիջոցային ճանապարհը և այլն: Սակայն, Հարավային Կովկասում հնդկական ներկայության ակտիվացմանը մեծապես նպաստեց 2020 թ. 44-օրյա պատերազմը և դրա հետևանքները: Մասնավորապես Թուրքիայի և Պակիստանի ներգրավվածությունը տվյալ պատերազմում, և թուրքական ռազմաքաղաքական գործոնի ակտիվացումը Հարավային Կովկասում ստիպեցին, որպեսզի պաշտոնական Նյու Դելին վերարժևորի Հարավային Կովկասը, որպես գլոբալ տարածաշրջանի անվտանգային բաղադրիչ:

Տրամաբանական է, որ ցանկացած պետություն առաջին հերթին սպասարկում է իր սեփական արտաքին քաղաքական օրակարգը, սակայն տվյալ դեպքում Հայաստանի Հանրապետության համար Հնդկաստանի որոշակի ներգրավվածությունը Հարավկովկասյան ռազմաքաղաքական գործընթացներում անչափ կարևոր է: Այդ առումով, եթե Հնդկաստանի հարաբերություններն Ադրբեջանի հետ ունեն էներգետիկ բնույթի նշանակություն և աչքի են ընկնում որոշակի

հավասարակշռությամբ, իսկ Վրաստանի հետ գերազանցապես լոգիստիկ-առևտրատնտեսական, ապա Հայաստանի պարագայում, առավելապես վերջին շրջանում, ակնհայտ նկատելի են պաշտպանական ոլորտում խորը ռազմավարական համագործակցության դրսևորումները:

Եթե փորձենք ամփոփել Հարավային Կովկասում Հնդկաստանի քաղաքական, և ոչ միայն, ակտիվությունն, ապա կարող ենք արձանագրել, որ դրա համար պարարտ հող հանդիսացան ա/ չինական գործոնի ազդեցության ծավալների ընդլայնումը Եվրասիայում, բ/ լոգիստիկ նոր երթուղիների նախագծերին Հնդկաստանի մաս կազմելու անհրաժեշտությունը, գ/ թուրքական և պակիստանյան գործոնների ուժեղացումը տարածաշրջանում և ի վերջո դ/ բազմաբևեռ և հարափոփոխ աշխարհակարգում հնդկական գլոբալ դերակատարության ուժեղացումը և ամրապնդումը:

Վերոնշյալ դիտարկումները փաստում են, որ Աշխեն Հովսեփյանի ատենախոսության թեման ոչ միայն արդիական է, այլև ունի գիտական, քաղաքական և կիրառական նշանակություն, իսկ քննարկվող հարցերը նաև հրատապություն:

Աշխեն Հովսեփյանի ատենախոսությունը նվիրված է Հնդկաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունների ուսումնասիրությանը Հարավային Կովկասում 1991-2018 թթ. ժամանակահատվածում: Հետազոտությունը նպատակ ունի ներկայացնել Հնդկաստանի տարածաշրջանային ներգրավվածության շարժառիթներն ու գործիքակազմը դիտարկելով Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ հարաբերությունների ձևավորումն ու դինամիկան, ինչպես նաև ցույց տալ Հնդկաստանի մոտեցումների շարունակականությունն ու փոփոխականությունը միջազգային հարաբերություններում ընթացող մրցակցային գործընթացների համատեքստում: Չնայած Հնդկաստանի համաշխարհային դերակատարության, բազմաբևեռության և արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացման վերաբերյալ առկա է լայն գրականություն, սակայն Հարավային Կովկասի ուղղությամբ համակողմանի և ժամանակագրորեն ամբողջական ուսումնասիրությունները սահմանափակ են, ինչը տվյալ աշխատանքի արդիականությունն ու գիտական արժեքը առավել ընդգծելի է դարձնում:

Աշխատանքում օգտագործվել են բազմազան սկզբնաղբյուրներ և մասնագիտական ուսումնասիրություններ ապահովելով նյութի

փաստարկվածությունն ու համադրական դիտարկումների հնարավորությունը: Ատենախոսության նպատակը, խնդիրներն ու կառուցվածքային տրամաբանությունը ձևակերպված են հստակ և ընդհանուր առմամբ համապատասխան են հետազոտական խնդիրների լուծման պահանջներին:

Առաջին գլուխը «Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական առանձնահատկությունները 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին. ընդհանուր ակնարկ», ծառայում է որպես մուքային մասն. առաջին ենթագլխում քննության են առնվում հետսառպատերազմյան տարիներին Հնդկաստանի արտաքին քաղաքականության առանցքային ուղղությունները ներկայացնելով մի շարք գործընկերների հետ հարաբերությունների ընդհանուր դինամիկան (ԵՄ, ԱՍԵԱՆ, Իրան, Պակիստան): Երկրորդ ենթագլխում վերլուծվում է Հնդկաստանի հարաբերությունների էվոլյուցիան ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Չինաստանի հետ ընդգծելով այն մոտեցումները, որոնց միջոցով Հնդկաստանը փորձել է հավասարակշռել ուժային կենտրոնների ազդեցությունները, և թե ինչ դեր կարող է ստանալ Հարավային Կովկասը հատկապես Չինաստանի աճող տնտեսական և ենթակառուցվածքային ներկայության պայմաններում:

Երկրորդ գլուխը վերաբերում է Հնդկաստան–Հայաստան հարաբերություններին 1991–2018 թթ. ժամանակահատվածում: Նախ ներկայացվում է պատմական առնչությունների զարգացման ուղին և շարունակականության հիմքը, ապա անկախությունից հետո ձևավորված համագործակցությունը քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, կրթական և մշակութային ոլորտներում: Կարևոր է, որ հեղինակը նաև ներկայացնում է գործընկերության խորացմանը միտված առաջարկներ:

Երրորդ գլուխը դիտարկում է Հնդկաստան-Վրաստան հարաբերությունները առանձնացնելով հատկապես տնտեսական և կրթամշակութային համագործակցության դրսևորումները, ինչպես նաև քաղաքական ոլորտում Հնդկաստանի զուսպ և հաշվարկված դիրքավորումը Ռուսաստանի և Արևմուտքի հակադրության զգայուն միջավայրում: Վրացական ուղղությամբ շեշտվում է նաև Վրաստանի աշխարհագրական և հաղորդակցային կարևորությունը Սևծովյան

ուղղությամբ դեպի եվրոպական շուկաներ հնարավոր ինտեգրման և Հարավային Կովկասում տնտեսական ներկայության ամրապնդման տեսանկյունից:

Չորրորդ գլուխը նվիրված է Հնդկաստան-Ադրբեջան հարաբերությունների զարգացմանը և դրանց վրա ազդեցություն ունեցող կարևոր գործոնի Պակիստան-Ադրբեջան ռազմական համագործակցության դիտարկմանը: Հեղինակը ներկայացնում է Ադրբեջանի հետ էներգետիկ և առևտրային համագործակցության շարժառիթները, ինչպես նաև մշակութային դիվանագիտության գործիքները, և միաժամանակ վերլուծում է այն հանգամանքները, որոնք պայմանավորում են Հնդկաստանի զգուշավոր ու հաշվարկված մոտեցումը Ադրբեջանի նկատմամբ տնտեսական շահերի և տարածաշրջանային քաղաքական հավասարակշռությունների համադրության շրջանակում:

Միևնույն ժամանակ գովելի է, որ հեղինակը մի շարք կարևոր եզրահանգումներ է կատարում հետևյալ հարցերի շուրջ, մասնավորաես **ա/** Հնդկաստանը տևական ժամանակ (1991-2018 թթ.) Հարավային Կովկասը դիտարկել է որպես մեկ միասնական միավոր, որև է առանձին պետության նկատմամբ ընդգծված առանձնահատուկ դիրքորոշման բացակայությամբ, **բ/** Հնդկաստանի արտաքին քաղաքական ազդեցության հիմնական գործիքակազմը գերազանցապես եղել է «փափուկ ուժը» դրսևորվելով մշակութային դիվանագիտության, կրթական ծրագրերի, քաղաքակրթական կապերի կառուցման նախաձեռնություններով և այլն, **գ/** 2018 թ. հետո Հնդկաստանի «փափուկ ուժի» արտաքին քաղաքական օրակարգում տեղ են սկսում զբաղեցնել ռազմավարական հաշվարկները, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերը, **դ/** 2000-ականների կեսերից սկսած Հնդկաստանի ներգրավվածությունը Հարավկովկասյան տարածաշրջանում զգալիորեն ակտիվացել է, ինչը համընկնկել է տնտեսական կայունացման և միջազգային համակարգում դերակատարության աճի հետ, **ե/** Հնդկաստանի քաղաքական և ռազմավարական շահերը Հարավային Կովկասում փոխկապակցված են եղել գլոբալ և տարածաշրջանային մրցակցային գործընթացների հետ, որոնց պարագայում էներգետիկ և տրանսպորտային մայրուղիների խնդիրը կարևոր դեր է խաղացել Հնդկաստանի քաղաքական հաշվարկներում: Հենց այդ առումով, Հարավային Կովկասը տևական ժամանակ ընկալվել է որպես տարանցիկ միջանցք դեպի

Կենտրոնական Ասիա և Եվրոպա, որն արտահայտվել է «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի, Չինաստանի «Մեկ գոտի մեկ ճանապարհ» նախաձեռնության մրցակցային տարբերակ, զ/ Հայաստան-Հնդկաստան հարաբերությունները ձևավորվել են խորապես արմատավորված պատմամշակութային փոխազդեցության և քաղաքակրթական ընդհանրությունների հիման վրա, ինչը ստեղծել էր բարենպաստ հիմք համագործակցության ընդլայնման համար: Հայաստանը որպես ԵԱՏՄ անդամ, Հնդկաստանի համար դիտարկվել էր որպես հեռանկարային տնտեսական հարթակ, իսկ Հնդկաստանը Հայաստանի համար գործընկեր, որը կարող էր որոշ չափով հակակշռել ադրբեջանա-պակիստանյան առանցքի ազդեցությունը, է/ Հնդկաստան-Վրաստան հարաբերություններն աչքի են ընկնում հարաճուն ու բնականոն զարգացմամբ, որոնք պայմանավորված են երկու երկրների տրանսպորտային միջանցքների, ինտեգրման նախաձեռնություններում, տեխնոլոգիական, առևտրային ու կրթական ծրագրերի համատեքստում շահերի համընկնմամբ, ը/ ի սկզբանե Հնդկաստանի համար Ադրբեջանը 1991–2018 թթ. ընկալվել է որպես կասպյան էներգետիկ ուղղության և էներգակիրների ներմուծման աշխարհագրության դիվերսիֆիկացիայի հնարավոր բաղադրիչ, սակայն հետագայում, Պակիստան-Ադրբեջան հարաբերությունների փաստացի դաշնակցային բնույթը և անվտանգային բաղադրիչի գերակայությունը Հնդկաստան-Ադրբեջան քաղաքական օրակարգի շուրջ ստեղծել էին որոշակի քաղաքական զգայունություն հատկապես հաշվի առնելով Հնդկաստան-Պակիստան դիմակայությունը, թ/ Հնդկաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասում առավել արդյունավետ է դրսևորվել այն ուղղություններում, որտեղ համընկել են երկկողմ շահերը և տարածաշրջանային կայունության տրամաբանությունը և հենց այդ առումով, 1991-2018 թթ. կարելի է դիտարկել որպես զարգացման մի փուլ, որն էապես նպաստել է հետագա շրջանի համագործակցությանը բարձրացնելով այն ռազմավարական մակարդակի:

Աշխատանքում տեղ են գտել մի շարք բացթողումներ, վրիպակներ, խմբագրական սխալներ, որոնց անդրադառնալու փոխարեն, կնշեմ միայն որոշ նկատառումներ և դիտողություններ, մասնավորապես

Աշխատանքում պատշաճ կերպով չի հիմնավորվում թեմայի

ժամանակագրության շրջանակներում «2018 թ.», որի հետևանքով որոշակի խնդրահարույց հարցեր են առաջանում Հնդկաստանի հարավկովկասյան քաղաքականության ակտիվության վերաբերյալ: Այստեղ առանցքային է 2020 թ. արցախյան 44-օրյա պատերազմը, որը փաստացի խլուզեց Հարավային Կովկասի հարաբերականորեն կայուն անվտանգային համակարգը նոր իրողություններ ստեղծելով պատերազմում Ադրբեջանին աջակցող թուրք-պակիստանական գործոնի համար:

Աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը առանձին ենթագլուխ հատկացներ Հնդկաստան-խաղաղօվկիանոսյան աշխարհաքաղաքական հայեցակարգի գիտական քննարկմանը, ինչը կուժեղացներ հեղինակի կողմից ԱՄՆ-ը Հնդկաստան, Չինաստան-Հնդկաստան հարաբերությունների ներկայացման հատվածները:

Շխատանքում ենթագլուխների առանձին հատվածներ հաճախ կրում են զուտ պատմողական բնույթ առանցքից բաց թողնելով տարբեր իրավիճակների քննական և համեմատական վերլուծությունները:

Շխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակն առանձին ենթագլխով անդրադառնար Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությանը ը ընկալման խնդրին եվրասիական տնտեսական և ռազմաքաղաքական ճարտարապետության համատեքստում, ինչը հնարավորություն կտար հեղինակին հարավկովկասյան տարածաշրջանը վերլուծել որպես համակարգ, և ոչ երկկողմ հարաբերությունների փուլեր:

Նշված խնդիրները, սակայն, չեն չեղարկում կամ նսեմացնում ներդրված մեծ ջանքերն այս բարդ թեման համապարփակ ուսումնասիրելու համար: Հովսեփյան Աշխենը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, Գոռ Գևորգյան

Հաստատում է
Ա. Հարությունյան
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտի տնօրեն